ՀՏԴ 332.12

ՀՀ համայնքների խոշորացման գործընթացը, առկա խնդիրները, դրանց վերլուծությունը և հետագա զարգացումը

(ՀՀ Լոռու մարզի խոշորացված համայնքների օրինակով)

Տիգրան Բարոյան

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-191

Հանգուցային բառեր. *համայնքների խոշորացում, պետական կառավարման համակարգի կայուն զարգացում, «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը», համայնքային փնջեր, տեղական հանրաքվե*

Նախաբան

Պետության կառավարման և սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման հիմքում կարևոր դեր ու նշանակություն ունեն համայնքները, որոնց գործունեության արդյունավետությանը բնորոշում է ամբողջ պետական կառավարման համակարգի կայուն ու համաչափ զարգացումը: Պետությունը՝ որպես ինստիտուցիոնալ համակարգ, կայուն զարգացման ու արդյունավետ կառավարում ապահովելու նպատակով իրականացվում է վարչատարածքային բաժանում, որի հիման վրա հետագայում տեղի է ունենում պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորում ու լիազորությունների բաշխում [1, 5]:

Հարկ է նշել, որ «ՀՀ վարչատարածքային բաժանումների մասին» ՀՀ օրենքը թույլատրում է իրականացնել համայնքային միավորների միավորում կամ բաժանում՝ ելնելով գործընթացի հետագա արդյունավետության գնահատման ցուցանիշներից ու հնարավոր ռիսկերի, հետևանքների ու ստացված արդյունքների կանխորոշման աստիճանից [2, 15-18]:

«Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»

2011 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը» [3]: Դրանով իսկ ՀՀ կառավարությունը հաստատեց, որ վարչատարածքային բարեփոխումներն անհրաժեշտ են՝ համայնքների զարգացման շարունակականության ապահովման, համայնքի կողմից առավել որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման, խոշորացված համայնքների միավորված ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, հողային և այլն) առավել արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Այնուհետև համայնքների խոշորացման գործընթացի անհրաժեշտությունը կարևորվեց նաև այլ իրավական փաստաթղթերում, մասնավորապես ՀՀ կառավարության տարեկան ծրագրերում, Կայուն զարգացման ծրագրում, ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում և այլն [17, 18]:

Միավորված համայնքներում իրականացվել են վերլուծություններ՝ համայնքային փնջերի ծրագրային առաջնահերթությունների վերաբերյալ, ինչի արդյունքում հրապարակվել է այդ վերլուծությունների ամփոփ հաշվետվությունը (այն զետեղված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում) [5]:

Վարչատարածքային բարեփոխումների ծրագրի շրջանակներում միավորված համայնքներում իրականացվել են ներդրումային ծրագրեր՝ ԱՄՆ ՄԶԳ (8.6 մլն ԱՄՆ դոլար) և Շվեյցարական դաշնային զարգացման գործակալության (2,3 մլն ԱՄՆ դոլար) ֆինանսավորմամբ: Ընթացքի մեջ է սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի

2-րդ բաղադրիչը, որի շրջանակներում իրականացվող ենթածրագրերով միավորված 29 համայնքներին տրամադրվել է 202 միավոր մեքենա-սարքավորում և 1220 աղբի կոնտեյներներ:

ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության ծրագրում (ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի №65-Ա), ինչպես նաև ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի №650-Լ որոշմամբ հաստատված գերակա խնդիրների և միջոցառումների ցանկում ընդգրկվել է «Վարչատարածքային բաժանման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» միջոցառումը [8], որի արդյունքում խոշորացման գործընթացը տեղի ունեցավ նաև ՀՀ Լոռու մարզի Վանաձոր, Գուգարք, Դարպաս, Շահումյան (թվով 4) համայնքների միավորմամբ, որի արդյունքում ձևավորվեց Վանաձոր խոշորացված համայնքը:

Խոշորացման գործընթացը համայնքների կառավարման արդյունավետության հաստատման ու ֆինանսական ապահովվածության տեսանկյունից

Շատ կարևոր է դիտարկել խոշորացման գործընթացը համայնքների կառավարման արդյունավետության հաստատման ու ֆինանսական ապահովվածության տեսանկյունից, հատկապես արդյունքային դիտանկյունից. ի վերջո միավորումը ենթադրում է համայնքային ծախսերի օպտիմալացում. թե ռեսուրսների վերաբաշխում և թե ինչպիսին է գործընթացի ազդեցությունը համայնքների սեփական եկամուտների ավելացման գործում:

Մինչ խոշորացման գործընթացի մեկնարկը ՀՀ-ում համայնքների թիվը կազմում էր 926:

Խոշորացման արդյունքում կազմավորված նոր համայնքներն էականորեն տարբերվում են դեռևս չխոշորացված համայնքներից իրենց մարդկային, ֆինանսական և ենթակառուցվածքային ռեսուրսներով և կարողություններով և լուրջ հնարավորություններ են ստեղծում ՀՀ ՏԻ համակարգում հետագա բարեփոխումների, մասնավորապես՝ ապակենտրոնացման իրականացման և տեղական ժողովրդավարության ամրապնդման համար:

Համայնքների խոշորացման գործընթացի իրականացման 1-ին փուլում՝ 2015 թվականին, խոշորացվել է 22 համայնք, և ձևավորվել է 3 բազմաբնակավայր համայնք, 2-րդ փուլում՝ 2016 թվականին, խոշորացվել է 118 համայնք, և ձևավորվել 15 բազմաբնակավայր համայնք, 3-րդ փուլում՝ 2017 թվականին, խոշորացվել է 325 համայնք, և ձևավորվել 34 բազմաբնակավայր համայնք:

2017 թվականի համայնքների խոշորացման արդյունքում Լոռու մարզում՝ 10 համայնք՝ Ալավերդի (7 բնակավայր), Ախթալա (9 բնակավայր), Ստեփանավան (4 բնակավայր), Տաշիր (12 բնակավայր), Գյուլագարակ (7 բնակավայր), Լոռի Բերդ (9 բնակավայր), Մեծավան (4 բնակավայր), Շնող (3 բնակավայր), Սարչապետ (8 բնակավայր), Օձուն (9 բնակավայր):

2021 թվականի սեպտեմբերի 24-ին համայնքների խոշորացման գործընթացը շարունակվեց, և 441 համայնքների փոխարեն ունեցանք 37 խոշորացված համայնք [4]: Վարչատարածքային վերջնական բաժանման արդյունքում ՀՀ-ում լինելու է 78 համայնք, ներառյալ Երևանը, և չխոշորացվող 6 համայնքներ, որտեղ ազգային փոքրամասնությունների թվաքանակը հակասում է միավորման գործընթացի սկզբունքներին:

Տեղական հանրաքվեները՝ համայնքների խոշորացման ժամանակ

(ՀՀ Լոռու մարզի օրինակով)

Մինչև 2015 թ. սահմանադրական բարեփոխումները ՀՀ Սահմանադրության 7-րդ գլխի 110-րդ հոդվածում ասվում էր.«Համայնքները, հանրության շահերից ելնելով, կարող են օրենքով միացվել միմյանց կամ առանձնացվել: Ազգային ժողովը համապատասխան օրենքն ընդունում է կառավարության առաջարկով: Մինչև օրենսդրական նախաձեռնության ներ-

կայացումը կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ: Տեղական հանրաքվեների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը: Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքից»:

Այն ժամանակվա Սահմանադրությամբ, փաստորեն, համայնքները միավորելիս կամ բաժանելիս դրանցում տեղական հանրաքվեներ անցկացնելու միջոցով բնակիչների կարծիքը լսելը պարտադիր էր: Բայց քանի որ այդ տեղական հանրաքվեներն ունեին խորհրդատվական բնույթ, անկախ դրանց արդյունքներից՝ համայնքները կարող էին միավորվել կամ բաժանվել:

2015 թ. մայիսի 17-ին տեղական հանրաքվեներ անցկացվեցին Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի այն համայնքներում, որոնք կառավարությունը մտադիր էր խոշորացնել:

Լոռու մարզում պատկերը հետևյալն էր. մասնակցության առումով ամենաակտիվն Աթան համայնքն էր, որտեղ տեղական հանրաքվեին մասնակցեց ընտրելու իրավունք ունեցող բնակիչների 47,14 %-ը, իսկ ամենապասսիվը Լորուտն էր, որտեղ տեղական հանրաքվեին մասնակցեց ընտրելու իրավունք ունեցող բնակիչների 34,12 %-ը:



Տեղական հանրաքվեների արդյունքում մարզի 7 համայնքներից 4-ում բնակչության մեծամասնությունը խոշորացմանն ասաց «այո», 3 համայնքում՝ «ոչ»:



ՀՀ համայնքների հիմնախնդիրները՝ սոցիալ-տնտեսական դժվարությունները, զարգացմանը խոչընդոտող գործոնները, պետական կառավարման մտահոգության առարկա են դարձել, սակայն հետագա զարգացմանը միտված ռազմավարական ծրագրերը մինչ օրս չեն իրականացվել:

Համայնքների խոշորացումը ապակենտրոնացման անհրաժեշտ գործընթաց է, որը կարող է էապես բարելավել հանրային կառավարման համակարգի գործադրումը: Նշված դրույթներն արտացոլված են պետության ռազմավարության մի շարք փաստաթղթերում և ծրագրերում: Համայնքների խոշորացումը տեսականորեն մեկնաբանվում է որպես համայնքների միավորման միջոցով տնտեսապես ուժեղ, ֆինանսապես կայուն համայնքների ձևավորմանն ուղղված ընթացակարգերի կամ գործընթացների ամբողջություն: Այն հիմնվում է այնպիսի հիմնարար սկզբունքների վրա, ինչպիսիք են միավորված համայնքների շահավետ փոխգործակցությունը՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդհանուր լիազորությունների միասնական իրագործման միջոցով, ինչպես նաև համերաշխ կենսագործունեությունը վարչատարածքային մի ընդհանուր միավորի շրջանակներում: Միավորումը նաև ենթադրում է համագործակցություն և միասնական մոտեցումներ, համընդհանուր բարեկեցությանը հասնելու նպատակով ռեսուրսների և ջանքերի մեկտեղում: Համայնքների խոշորացման հիմնական նպատակները, որոնցից էլ բխում են ակնկալվող արդյունքները, համարվում են համայնքների կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող ծառայությունների որակի բարձրացումը, դրանց համակարգումը և այլն: Համայնքների միավորումը կամ խոշորացումը ենթադրում է ներառվածության որոշակի մակարդակ, որին հնարավոր է հասնել նպատակային և երկարատև նախապատրաստական աշխատանքների միջոցով, որոնք սովորաբար ուղղված են նոր ձևավորվող համայնքի հանդեպ բնակչության վստահությունը շահելուն, անհրաժեշտ իրավական հիմքեր ապահովելուն, համայնքին նոր արտոնություններ, հնարավորություններ տրամադրելուն, իշխանությունն ու լիազորությունները ընդլայնելուն, դրանց արդյունավետ իրագործման համար պետության կողմից աջակցություն ցուցաբերելուն և այլն: Մեծ կարևորություն է ստանում նաև համայնքների բոլոր հնարավոր կորուստների փոխհատուցումը նոր՝ միավորված համայնքի ձեռքբերումներով, հնարավոր առավելություններով, արտոնություններով և դրական արդյունքներով:

Համայնքների խոշորացումն այսօր դարձել է լուրջ բանավեճերի և քննարկումների առարկա, որոնց ընթացքում հնչող կարծիքները բաժանվում են երկու խմբի. համայնքների խոշորացման ծրագրի կողմնակիցները գտնում են, որ խոշորացումը հնարավոր միակ օպտիմալ լուծումն է համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը և տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետ գործարկումն ապահովելու համար, իսկ հակառակ տեսակետի կողմնակիցները կարծում են, որ դա բացասական հետևանքներ կունենա համայնքների բնականոն կենսագործունեության վրա և անգամ ազգային անվտանգությանը սպառնացող ու ոչնչով չարդարացված ռիսկեր է պարունակում:

Կարծում ենք, որ այդ երկու մոտեցումներն էլ խիստ ծայրահեղ են. սոցիալական ցանկացած երևույթ կամ գործընթաց, բարեփոխում ունի թե՛ դրական, թե՛ բացասական կողմեր: Հետևաբար խնդիրը ոչ թե այն է, որ ապահովվի լիովին դրական արդյունք ենթադրող կամ միայն դրական հետևանքներ ունեցող փոփոխություն, այլ համապատասխան գործողությունների միջոցով հնարավոր լինի հասնել դրական արդյունքների գերակշռության բացասականների նկատմամբ:

Հաշվի առնելով համայնքերի առանձնահատկությունները, ինչպես նաև տարբեր մեկնաբանություններն ու կարծիքները համայնքների խոշորացման գործընթացի վերաբերյալ՝ փորձենք հիմնավոր կերպով վերլուծել գործընթացի արդյունքում առաջացող արդյունքները:

Համայնքների խոշորացման դրական և բացասական արդյունքները

Հայաստանում համայնքների խոշորացման դեպքում դրական արդյունքների շարքին կարելի է դասել.

1. մարդկային ռեսուրսների համախմբումը,
2. համայնքի կառավարման արդյունավետության բարձրացումը,
3. տեղական ինքնակառավարման մարմինների մրցակցային և թափանցիկ ընտրությունների ապահովման հնարավորությունների ընդլայնումը,
4. ենթակառուցվածքների զարգացումը և ծառայությունների արդյունավետության ու որակի բարձրացումը,
5. ավելի մեծ թվով մարդկանց որակյալ ծառայություններ տրամադրելու հնարավորությունների ստեղծումը,
6. ֆինանսական կարողությունների ուժեղացումը և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդլայնումը,
7. համայնքային զարգացման կապիտալ ծրագրերի իրականացումը և այլն:

Այդ ամենի հետ մեկտեղ՝ ակնկալվում է նաև հետագա ապակենտրոնացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, տեղական ինքնակառավարման համակարգի հետևողական զարգացում, տնտեսության տարբեր ճյուղերի, հատկապես գյուղատնտեսության զարգացման համար նախադրյալների ապահովում: Հնարավոր կլինի արդյոք համայնքների խոշորացման միջոցով հասնել այն արդյունքներին, որոնք նախատեսված են, ցույց կտա ժամանակը: Սակայն արդեն այսօր բազմաթիվ մտավախություններ կան: Ընդ որում, այդ մտավախությունները կիսում են թե՛ մեծ, թե՛ փոքր համայնքները, թե՛ բնակիչները, թե՛ համայնքների ինքնակառավարման մարմինները և թե՛ համայնքային ծառայողները, ովքեր խոշորացմանը դեմ ամենամեծ ուժերն են, քանի որ աշխատատեղերի կորստի լուրջ վտանգ են տեսնում, իսկ նոր հնարավորությունները համայնքների համար ընդհանուր առմամբ անորոշ են թվում: Մեծ համայնքներն անհանգստացած են, որ փոքրերը «կկլանեն» իրենց միջոցները, մինչդեռ իրենք նույնպես չլուծված բազմաթիվ խնդիրներ ունեն: Փոքր համայնքները կարծում են, որ ֆինանսական միջոցներն իրենց չեն էլ հասնի, քանի որ մեծերն «անմիջապես մոտ են կանգնած» ֆինանսական և այլ ռեսուրսների:

Համայնքների խոշորացման դեպքում բացասական արդյունքների շարքին կարելի է դասել.

1. համայնքային ծառայողների գործազրկությունը,
2. ծառայությունների հեռացումը համայնքներից և բնակիչներից,
3. բնակչության էթնիկ համատեղելիությունը և մշակութային համապատասխանությունը,
4. միավորված համայնքների միջև ռեսուրսների անհամաչափ բաշխման վտանգը,
5. համայնքների ձուլումը և խոշորացված համայնքների վերացումը:

Եզրակացություն

Դիտարկելով այս երկու հակադիր մոտեցումներում առկա տեսակետները՝ այնուամենայնիվ կարծում ենք, որ համայնքների խոշորացման գործընթացը ժամանակի հրամայական է, և համայնքների խոշորացումը պահանջված բարեփոխում է, իսկ բացասական հնարավոր հետևանքներից կարելի է խուսափել դրանք կանխատեսելու և հաղթահարելու կամ մեղմելու նպատակով համապատասխան քայլեր իրականացնելու միջոցով: Այդ նպատակով առաջարկում ենք.

1. Համապատասխան համայնքներում իրականացնել տեղեկատվության փոխանակման, լուսաբանման և քարոզչական ավելի ինտենսիվ աշխատանքներ, որտեղ համայնքների

խոշորացումը կներկայացվի և կմեկնաբանվի ոչ թե որպես համայնքների զուտ միավորում, այլ որպես համայնքների միջև համագործակցության ակտիվացում:

2. Համայնքային ծառայողների գործազրկության հարցը որոշակիորեն կարգավորելու համար անհրաժեշտ է նախապես քայլեր իրականացնել նրանց զբաղվածության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով արդյունավետ կլինի համագործակցել զբաղվածության պետական գործակալության հետ և համատեղ մշակել համայնքային ծառայողների վերապատրաստման կամ վերառրակավորման ծրագրեր:

3. Համայնքների պատմամշակութային կապերը, հարաբերությունները, դրանց սոցիալ-մշակութային ենթատեքստը, ինչպես նաև նախկին համագործակցության փորձը պետք է լինեն խոշորացման պլանների մշակման առաջնային թիրախում:

Ամփոփելով նշենք, որ համայնքների խոշորացումն արդեն իսկ գոյություն ունեցող գործընթաց է, որի ընթացքից և ստացված հաջողություններից կախված է այն, թե ինչպիսի արդյունքներ կունենա խոշորացման ծրագիրն ընդհանրապես: Սակայն անհրաժեշտ է պարբերաբար ու մանրակրկիտ հաշվարկել համայնքների խոշորացման հնարավոր բացասական հետևանքները և մշակել դրանց չեզոքացման ավելի արդյունավետ միջոցառումներ: Միայն այդպես հնարավոր կլինի ակնկալել և ստանալ դրական արդյունքներ:

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-191

Գրականություն

1. «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք»՝ ընդունված 2002 թվականի մայիսի 7-ին:
2. «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1995 թվականի նոյեմբերի 7-ին:
3. «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», ՀՀ Կառավարության արձանագրային որոշման 44 հավելված՝ ընդունված 2011 թվականի նոյեմբերի 10-ին:
4. «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ՝ ընդունված 2021 թվականի սեպտեմբերի 24-ին:
5. http://www.mtad.am/hy/ – ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքէջ, հաշվետվություններ,
6. https://armstat.am/am/ – ՀՀ Վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը հրապարակումներ:
7. http://www.atdf.am/ – Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պաշտոնական կայքէջ:
8. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-93-Ն օրենք:
9. Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ) Մեթոդաբանություն, Երևան, Վան Արյան, 2017, ISBN 978-9939-70-221-6:
10. 6 մարտի 2014 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարություն թիվ 214-ա «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» որոշում:
11. 2017 թվականի 9 հունիսի ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք ՀՕ-94-Ն:

12. ՀՀ Սահմանադրություն (2015 թ. փոփոխություններով), https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510
13. Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20822, https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/122
14. Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի բացատրական զեկույց, https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/ treaty/207
15. Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», Եր., 2011:
16. «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ», Եր., 2012:
17. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», Եր., 2014:
18. «Կառավարության ծրագիր», Եր., 2020:
19. Basic Reading on Unification/ Huh Moon Young, Seoul, Korean Institute for National Unification

Процесс укрупнения общин РА, связанные с ними проблемы, их обзор и дальнейшее развитие (на примере укрупненных общин Лорийской области РА)

Тигран Бадоян

Резюме

Ключевые слова: *укрупнение общин, устойчивое развитие системы государственного управления, концепция укрупнения общин и формирования межобщинных объединений, объединение общин, местный референдум*

Общины имеют важную роль и значение в основе государственного управления и реализации социально-экономических программ, эффективность которых характеризуется стабильным и сбалансированным развитием всей системы государственного управления. Государство, как институциональная система, в целях обеспечения устойчивого развития и эффективного управления, организуется административно-территориальным делением, на основе которого в дальнейшем происходит формирование и распределение полномочий органов государственного, территориального управления и местного самоуправления. Следует отметить, что закон РА «Об административно-территориальном делении Республики Армения» допускает объединение или разделение единиц общины, исходя из показателей дальнейшей оценки эффективности процесса и степени предопределения возможных рисков, а также из последствий и полученных результатов от степени предопределенности. 10 ноября 2011 года правительство Республики Армения утвердило «Программу укрупнения общин и образования межобщинных объединений». Подводя итоги, отметим, что укрупнение общин – это уже существующий процесс, ход и успех которого зависят от результатов программы укрупнения в целом. Однако необходимо регулярно и тщательно просчитывать возможные негативные последствия укрупнения сообществ и разрабатывать более эффективные меры по их нейтрализации. Только так можно будет получить положительные результаты.

The Process of Enlargement of Ra Communities, Problems, their Review and Further Development (On the Example of the Enlarged Communities of Lori Marz, RA)

Tigran Badoyan

Summary

Key words: *community enlargement, sustainable development of the state administration system, the concept of community enlargement and formation of inter-community associations, community bundles, local referendum*

The foundation of state administration and the execution of socioeconomic initiatives are heavily reliant on communities, whose efficacy is demonstrated by the steady and well-balanced growth of the state management system as a whole. The administrative territorial division carried out by the state, as an institutional system, ensures stable development and efficient management. This division serves as the foundation for the future formation and distribution of powers among local self-government bodies and state and territorial administration. It should be mentioned that the Republic of Armenia's "On Administrative Territorial Divisions of the Republic of Armenia" law permits community units to be divided or united depending on metrics used to assess the efficacy of an ongoing process and the degree of predetermination of possible risks, consequences and obtained results. On November 10, 2011, the government of the Republic of Armenia approved the "Program for the consolidation of communities and the formation of intercommunity associations." To summarize, we note that community consolidation is an already existing process, the progress and success of which depends on the results of the consolidation program as a whole. However, it is necessary to regularly and carefully calculate the possible negative consequences of the consolidation of communities and develop more effective measures to neutralize them. This is the only way to get positive results.

Ներկայացվել է 13.10.2023 թ.
Գրախոսվել է 16.10.2023 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.